ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆԻՍ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

17 սեպտեմբերի 2012թ. գյուղ Կարենիս

2012 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի է ունեցել Կարենիս համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Նշան Խաչատրյանի,
2. Վարդան Մարգարյանի,
3. Սարգիս Դավիդյանի,
4. Միհրան Դավթյանի

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

Լուսիկ Խաչատրյանի/աշխատակազմի քարտուղար/,
Կարեն Դավթյանի/գլխավոր մասնագիտ/,
Նվեր Ալեքսանյանի/առաջատար մասնագետ հաշվապահ/,
Սվետլա Դավթյանի/1-ին կարգի մասնագետ/,
Սուսաննա Մուրադյանի/2-րդ կարգի մասնագետ/,
Ալեքսանյան Էմմա /գործավար/
Համայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավարը իր ելույթում մասնավորապես ասաց.

Հարգելի համագյուղացիներ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կատարվել են բազմաթիվ աշխատանքներ.

վարչական տարածքում հիմնված 8 հա անտառային շերտը մեծացվել է, խնամվում և պահպանվում է համայնքի միջոցներով:

Կատարվել է ոռոգման ցանցի մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Կատարվել է մեծ ծավալի աշխատանք ֆուտբոլի դաշտի բարեկարգման վրա:

Համայնքի ղեկավարին են դիմել համայնքի 21 բնակիչ դրամական օգնության խնդրանքով: Որոնց վար ու ցանքի աշխատանքները իրականացնելու կամ անձնական հարցերը կարգավորելու համար, համայնքի բյուջեից տրվել է 810 000 դրամ օգնություն,

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատավարձի գծով պարտք չենք ունեցել:

Ցավոտ խնդիր է եղել և մնում է համայնքի ճանապարհը, որը հանրապետական նշանակության ճանապարհ է, ուստի գտնվում է պետական հոգածության ներքո: Բազմաթիվ անգամներ դիմել ենք Հանրապետության նախագահին, Տրանսպորտի և կապի նախարարին, Տարածքային կառավարման նախարարին, տարբեր կազմակերպությունների, միակ պատասխանը որ ստացել ենք,դա այն է եղել, որ այդ հարցը ***կնդգրկվի*** *գալիք տարվա կատարվելիք աշխատանքներում և մնացել է նույն վիճակում:*

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Նշան Խաչատրյանը

-Հարգելի համագյուղացիներ, ես անձամբ իմ և դպրոցի ամբողջ կոլեկտիվի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Կարենիս համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին, որոնք ոչ մի հարց, որը կապված է դպրոցի խնդիրներին, չեն անտեսել, օգնել են ու աջակցել: Մեր համայնքում առկա են շատ խնդիրներ, որոնք լուծվելու են համատեղ ուժերով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Առաջարկությամբ հանդես եկան համայնքի բնակիչներ՝ Կառլեն Դավթյանը, Վարդուհի Ավետիսյանը, Հովիկ Սարիբեկյանը և Հենրիկ Մուրադյանը.

1. *Կառլեն Դավթյանը առաջարկեց համայնքի ուժերով կատարել համայնքի ճանապարհի մասնակի վերանորոգում՝ փոսալցում:*
2. *Վարդուհի Ավետիսյանը նշեց, որ երեխաների նկատմամբ հոգատարությունը և խնամքը ամենաառաջնահերթ խնդիրն է, ուստի առաջարկեց համայնքի բյուջեում հավաքվող գումարները ուղղել նախադպրոցական կառույց ստեղծելու համար:*
3. *Հովիկ Սարիբեկյանը առաջարկեց բացել սպորտային խմբակ:*
4. *Հենրիկ Մուրադյանը ՝առաջարկեց կարգավորել և ցանկապատել Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը:*

ՈՐՈՇՎԵՑ

Կարենիս համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Առաջիկայում կատարել հետևյալ աշխատանքները.

-ավարտել ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքները,

- ավարտել լուսավորության աշխատանքները,

- վերականգնել մշակույթի համայնքում,

- շտկել առկա թերությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ